ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«08» հոկտեմբերի 2019 թվականի N:237 ք.Գյումրի

ՄՈՒՇԵՂ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ, ԱՐՏԱԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ ՄՀԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N:1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 11-րդ և 22-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետի 2019 թվականի հոկտեմբերի 8-ի զեկուցագիրը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Մուշեղ Մուրադյանին, գլխավոր մասնագետներ Արտակ Հայրապետյանին, Սամվել Հարությունյանին և առաջատար մասնագետի ժամանակավոր թափուր պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով ուսուցանվող աուդիտորի կարգավիճակով զբաղեցնող Միեր Հարությունյանին 2019 թվականի հոկտեմբերի 9-ին և 10-ին գործուղել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Աղին բնակավայր՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Աղինի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում համակարգի գնահատման աուդիտ իրականացնելու նպատակով:

2. Մուշեղ Մուրադյանին, Արտակ Հայրապետյանին, Սամվել Հարությունյանին և Միհեր Հարությունյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի՝ հետ ճիշտ է